ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2023 թվական թիվ 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0062-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 և 39-րդ կետերի դրույթներով ինչպես նաև հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ՝ Գուրգեն Ռազմիկի Պետրոսյանը 2023 թվականի ապրիլի 7-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 118,629 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 20,77 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 0,81 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0062-0002 կադաստրային ծածկագրով 0,03743 հեկտար մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված, ինքնակամ կառուցված և օրինական ճանաչված 118,29 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 20,77 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 0,81 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0062-0002 կադաստրային ծածկագրով, 0,03743 հեկտար մակերեսով բնակավայրերի հողերի

նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Ջրաշինարարների փողոց, 3-րդ անցուղի, 14 տուն, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 31052023-08-0037) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով՝ 938238 (ինը հարյուր երեսունութ հազար երկու հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, որից՝ 481218 Հայաստանի Հանրապետության դրամը շինության արժեքն է, իսկ 457020 Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Գուրգեն Ռազմիկի Պետրոսյանին (նույնականացման քարտ 004854485 տրված 2014 թվականի նոյեմբերի 13-ին, 030-ի կողմից, բնակվող Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների փողոց,3-րդ անցուղի տուն 14):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գուրգեն Ռազմիկի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կ. ԱՐՇԱԿՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Հ. ՆԱՎՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

13 ապրիլի 2023 թվական
գյուղ Ախուրյան